

Հա', հա', հա'... Պողոտանը՝ թաղաւոր
Գուգարքի: Ամէնէն առեւի մարդն էս.
Ի՞նչպէս մինչեւ հիմա կաշիդ չքերթեցին:
Պողոտան - Ի՞նչ կը խնդաս, իշխան, ար-
հեստն արհեստ է: Ես արդարութեան բա-
զուկն եմ:

Բ. Բանտապահ - Ե՞րբ հողիդ դժուր
պիտի իջնէ:

Պողոտան - Սողաշէլը զիս ներս չ'առնէր.
նայի՛նք, Պետրոս առաքեալն ի՛նչ պիտի
ըսէ:

Ա. Բանտապահ - Դու հողի ունի՞ս:

Պողոտան - Ես չեմ տեսած իմ հողիս...
թերեւս ունիմ:

Բ. Բանտապահ - Քու հողիդ սեւամորթ
պէտք է ըլլայ:

Ա. Բանտապահ - Մինչեւ հիմա քանի՞
զուլս կտրեր էս:

Պողոտան - Թէպէտ արհեստի դադարիք
է, բայց ըսեմ: Քսանը՛նդ տարի է Գու-
գարքի կը ծառայեմ. թերեւս երկու հա-
զար զուլս կտրած եմ: Հայրս ալ այս ար-
հեստն ունէր. ես իրեն յաջորդեցի: Փոքր
ատենս՝ վրաս մարելիք կու դար: Դատա-
պարտեալներուն աչքերը ես կը կապէի.
անոնց զգեստները ես տուն կը տանէի:
Երբ առաջին անգամ հայրս ինձ կացինը
տուաւ՝ զուլս մը կտրելու, չեմ մոռնար,
վսեմ կին մըն էր, կարծեմ իշխանուհի
մը. սիրտս չզիմացաւ իր ողբերուն, ձեռ-
քերս դողացին: Պողոտան, մի՛ թու՛նար,
պոռաց հայրս: Կացինը նորէն վերցուցի,
աչքերս դոցեցի եւ սուր երկաթն իջաւ:
Երկար զիշերներ չկրցայ քնանալ, երա-
զիս մէջ կը տեսնէի այդ գեղեցիկ կինը,
գլուխը ձեռքերուն մէջ՝ սարսափելի աչ-
քերով ինձ կը նայէր: Մեղաւո՞ր էր, ար-
դա՞ր էր... ո՞վ զիտէ: Ի՞նչ կ'արժէ խիղճ,
զուլթ, երբ սէրն ալ կը պատժեն:

Ա. Բանտապահ - Այդ օրէն անիծեալ
արհեստդ սկսար:

Պողոտան - Այո՛, տեսայ որ կեանքը պա-
րապ է. մահը թերեւս առեւի լաւ է, եւ ես
սիրեցի այս արհեստը. թշուառներու մի-
ակ միթարանքը:

Շուշանիկ - (Քարայրի խորէն) Կաթիլ
մը ջո՛ւր, ի սէր Աստուծոյ...:

Պողոտան - (Դէպի ներս պոռալով) Համ-
բերէ՛: (Բանտապահներուն) Բոլորն ալ
այսպէս են. մահուան ժամանակ ջուր կը
խնդրեն: Քովը օրը մէկ թաս ջուր կը դը-
նէք, եւ դարիէ հաց մը: Ո՛չ ոք այցելէ:
Ես երթամ, կարեւոր դործ ունիմ. այսօր
մէկը պիտի գլխատեմ: (Կը մեկնի):

Ա. Բանտապահ - Իսկապէս սեւ հողի
մըն է:

Բ. Բանտապահ - Գուրթ երբեք չունի:

Ա. Բանտապահ - Այսպիսի գեղեցիկ կին
մը չլթայէ՛լ:

Բ. Բանտապահ - Եթէ կարենայի մին-
չեւ էլարուկ կը փախցնէի:

Ա. Բանտապահ - Թագաւորներուն, իշ-
խաններուն գեղեցիկ կիներ չեն պակսիր:

Բ. Բանտապահ - Ի՞նչ կը պակսի. ա-
մէն բան իրենց համար է:

Ա. Բանտապահ - Իսկ մենք ալ մը դա-
րիի համար՝ զնդաններուն առջեւ պէտք է
մաշինք:

Բ. Բանտապահ - Վրաս բորբոս կա-
պեր է:

Ա. Բանտապահ - Խոնաւութենէն կար-
ծես մէջքս երկուքի բաժնուեր է:

Բ. Բանտապահ - Գինիի փարչը բերի՞ր:

Ա. Բանտապահ - Հո՛ն, անկիւնն է:

Բ. Բանտապահ - (Փարչը բերնին տա-
նելով) Միակ միթարութիւնը որ ունինք:
(Զգեստի քելով բերանը կը սրբէ. ապա
մրմռալով կ'երգէ.

Խմենք զինի, ուրախանա՛ք,
Երբ մեռնիլ կայ աշխարհի մէջ.
Ո՛վ չի խըմեր՝ նա չունի կեանք,
Երբ մեռնիլ կայ աշխարհի մէջ:

Ա. Բանտապահ - (Ինքն ալ փարչը բեր-
նին տանելով կը խմէ, քելով բերանը կը
սրբէ եւ ապա կ'երգէ.

Գոյնն է կարմիր՝ սիրոյ նման,
Որ ցնծութիւն կու տայ սրտին.
Գինին անոյշ, զինին բուրեան,
Աղջիկներուն պէս Գուգարքին...:

Շուշանիկ - (Նուաղկոտ) Պուտ մը
ջո՛ւր, ձեռք գաւազներու սիրոյն:

Ա. Բանտապահ - (Կոշտ խնդալով) Զա-

ւակներու սիրոյն. ի՛նչ կին, ի՛նչ գաւազ:
Կ'ըսեն թէ զինուորին ընտանիքը հայրե-
նիքն է: (Կոշտ խնդալով) Հա', հա', հա'
... Հայրենի՛ք... երբ դրպանս լեցուն է
եւ փարչն Երեւանի զինիով զեղուն, հոն
է իմ հայրենիքս:

Շուշանիկ - Կաթիլ մը ջո՛ւր, ձեռք գա-
ւազներու սիրոյն համար:

Բ. Բանտապահ - Վա՛յ, ապուշ. երկու
օր է՝ մոռցեր ենք խեղճին կաթիլ մը ջուր
տալ:

Ա. Բանտապահ - Տեղը քիչ մը զինի
տանք: (Ծանօթիւն փարչն առած բանտին
դուռը կը բանայ) Խմէ՛, խմէ՛, ասիկա
Քրիստոսի արիւնն է:

Շուշանիկ - Երանի թէ ըմպէի այդ ան-
մահութեան զինիէն:

Ա. Բանտապահ - Խմէ՛, խմէ՛, Երեւա-
նի զինի է. աս ալ անմահութիւն կու տայ:

Շուշանիկ - Զո՛ւր կ'ուզեմ, կ'այրի՛ հո-
ղիս...:

Բ. Բանտապահ - (Քովի զինուորին) Ա՛ռ
թասը քովէն եւ ջուր բեր. կարելի չէ
ջուրն ալ խնայել:

Ա. Բանտապահ - Եւ սակայն հրամանը
խիստ է, կաթիլ կաթիլ ջուր տալ (Կ'եր-
թայ ջուրի):

Բ. Բանտապահ - Բե՛ր սա ջուրը, չհա-
մբեր կաթիլները: (Թասը Շուշանիկին
տալով) Խե՛ղճ տիրուհի, իմ ալ սիրտս
կտոր կտոր կ'ըլլայ. բայց ի՞նչ ընեմ. իշ-
կոտր կտոր մէկն է. իրեն համար մարդ
խանը սոսկալի մէկն է. իրեն բանն է: Ա-
սպաննել, հաւ մորթել նոյն բանն է: Ա-
ռատօրէն խմեցէք, ես նորէն կը բերեմ:

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

Վիուկ մը եւ վերինները

Ա. Բանտապահ - (Ընկերոջ) Կը լսե՞ս,
հեռուէն լացի եւ աղաչանքի ձայն կու դայ
(Հեռուէն ողբի ձայներ, սուր եւ կեղե-
քիչ):

Բ. Բանտապահ - Ուրիշ թշուառ մը՝
Պողոտանի ճիրաններուն մէջ:

Ա. Բանտապահ - Եթէ իշխան ըլլայի,
մահուան պատիժը կը վերցնէի. ո՛վ զի-

տէ քանի՛ անմեղներ զուր տեղ կը սպան-
նուին:

Բ. Բանտապահ - Կը յիշե՞ս այն փառա-
ւոր երիտասարդը՝ որուն զլուխը կտրե-
ցին անցեալ տարի:

Ա. Բանտապահ - Կը յիշեմ, դեռ ահանջ-
ներուս մէջն են իր ցաւազին ողբերը:

Բ. Բանտապահ - Է՛հ, զինքն ամբաս-
տանած էին թէ իշխանին դէմ գաւազ է:
Իր չար բախտէն՝ պալատին առջեւէն ան-
ցած ատեն, աղմուկ եւ սուրբերու շառաչ

կը լսուի: Ան, սուրբ մէջքին, աճապա-
րանքով ճամբորդութենէ մը տուն կը վե-

րադառնար. բանէ մը լուր չունէր: Պա-
հապարտ զինքը ձերբակալեցին, եւ իշ-
խանները զինքը ձերբակալեցին, եւ իշ-

խանն առանց հարց ու փորձի՝ մահուան
խանութեան դիմեցին: Մեռաւ հէգ երիտասար-
դը. մինչ գաւազիւնները պալատին մէջն
էին: Ո՞վ լացաւ իր վրայ. այրի կին մը
եւ թշուառ որբեր. ու մոռցուեցաւ:

Ա. Բանտապահ - Հէրն անիծեմ այդ-
պիսի արդարութեան:

Վիուկ - (Սեւ շալի մէջ պլոււած, մաղ
մը եւ ուլունքներ ձեռքը, կամաց կամաց,
մատներու ծայրով, կաղալով առաջ կու
գայ: Պահակները նիզակները դէպի վը-
հուկը ուղղած): Ե՛ս եմ...:

Ա. Բանտապահ - Ո՞վ ես. կեցի՛ր:

Վիուկ - (Մատը բերնին, ցած) Մո՛ւս,
իշխանին հրամանն է. (Մօտենալով բան-
տի դրան, աւելի բարձր) Մեր տիրուհիին
սիրտը գեղեցիկ է, ինչպէս Մայիսի ա-
րուսեակը: (Պահակներուն, ցած) Բացէ՛ք
զուռը: (Բանտապահը կը բանայ) Վա՛յ
տիրուհիս, քոռնայի, դուն հո՞ս:

Շուշանիկ - Ո՞վ ես դու:

Վիուկ - Երջանկութեան գուշակուհին:
Ես գաղտնի արհեստով կը կարգամ մար-
դերու բախտը. կը տեսնեմ անոնց ապա-
դան: Դեռն ինձ կը հնազանդին, հրեշ-
դան: Գիւրդն ինձ կը խօսին: Վիշտեր կը
տակները հետս կը խօսին: Վիշտեր կը
փարատեմ, ցաւի ծովերէն թշուառներ
կ'ազատեմ:

Շուշանիկ - Հեռացի՛ր, խաբեբայ:

Վիուկ - Այդպէս մի՛ ըսէք, տիրուհիս.
հազարներ երջանիկ ըրած եմ. ահաւասիկ
մաղին մէջ կը ձգեմ հինգ կապոյտ ու-

լուսններ. եթե մէկ կարգի շարունակ՝ հա-
զարաւոր դոհաններ թողելը դարձել պիտի
կազմեն. տե՛ս. մէկ, երկու, երեք, չորս,
հինգ (Մէկիկ մէկիկ մաղին մէջ կը նետէ):
Մէկ կարգի (ուժով կը ճշայ) մէկ կարգի,
ի՛նչ բախտ, ի՛նչ երջանկութիւն: Մութ
բանտէն պիտի ելլես եւ ամուսինիդ հետ
փառաւոր կեանք պիտի վարես: Իմ բա-
րի եւ ազնիւ տիրուհիս, զիս մի՛ մոռնար:
Հիմա վազդէն իշխանը կու գայ՝ սիրա-
կան թեւերէդ բռնելու. նետուէ՛ իր դիր-
կը, ընդունէ իր խօսքերն՝ իբր երկնային
պատգամ:

Շուշանիկ - Ողորմելի թշուառական,
պատառ մը հացի համար՝ հողիդ դեւե-
րուն ծախեր ես. եւ վազդէն կը հաւատայ
այսպիսի սնապաշտութեանց:

Վիտիկ - Կը հաւատա՞յ, չա՛տ կը հաւա-
տայ:

Շուշանիկ - Ճշմարիտ Աստուած ուրա-
ցողը ամէն ոչինչի կը հաւատայ: Գնա՛,
մուրացիկ եղիր, քան սատանային դոր-
ծակից:

Վիտիկ - Ի՛նչ մուրացիկ. ես յաճախ իշ-
խաններու հետ կը ճաշեմ, աշխարհի
բախտն իմ ձեռքիս մէջն է. կ'ուզե՞ս զիտ-
նալ թէ ինչ դրուած է քու ճակտիդ վրայ.
ահա եղունգիս մէջ կը կարդամ: (Բթա-
մաւոր բարձր բռնած կը նայի եւ արտա-
սանելով կ'ըսէ).

Ելիր, ելիր

Ովկեաններու ծոցէն, աստղիկ,

Լոյսն ըզզեցիր,

Օրեր ունիս դու գեղեցիկ:

Ահա կ'ելլէ

Արուսեակի պէս առտըւան

Խոր ծովերէ

Կին մը չըքնող, արեւ վերան:

Իշխանուհի՛դ իմ, հաւատա՛ երջանիկ
բախտիդ, հրաշալի՛ է, հրաշալի. այս-
քան պայծառ ապագայ երբեք չէի տեսած:
Ինչո՞ւ խաւարին մէջ չըթաներու տակ մա-
շել գեղեցիկ կեանք մը: Վազդէնին բա-
զունները քեզի ոսկեղէն գահ պիտի բլլան.
Հայաստանի եւ Վրաստանի թագուհին

պիտի բլլաս. մի՛ թողներ որ բախտդ ամ-
պի պէս կապոյտ երկինքէդ հեռանայ:

Շուշանիկ - (Բիչ մը խիստ) Դեռ ուրիշ
ցնդարանութիւններ ալ ունի՞ս: Հեռա-
ցի՛ր, սատանայի հողի:

Վիտիկ - (Խորհրդաւոր ձեւեր ընելով)
Եկէ՛ք, ողիներ լուսնակ գիշերներու. ե-
կէ՛ք դուք քաջեր Մասիս սարերու, քակե-
ցէք իր շղթաները, տարէք ոսկի գահին
վրայ:

Շուշանիկ - Ո՛վ Յիսուս, համբերու-
թիւն տուր:

Վիտիկ - Եկէ՛ք, ոսկի ծովերէն, կոյս յա-
ւերժահարսեր, ու տարէք մեր թագուհին
մեղաքսէ բարձրու վրայ:

Ա. Բանտապահ - Լա՞ւ, թէ խնդալ:

Բ. Բանտապահ - Ի՞նչ բանի վրայ:

Ա. Բանտապահ - Այս յիմար պառաւին
վրայ:

Բ. Բանտապահ - Նիզակով փորը ձեզ-
քել: Սուտերով յիմարներ կը խարեն,
դրամ կը շորթեն:

Ա. Բանտապահ - Գուզարքի մէջ, քա-
հաններէն աւելի վհուկներ կան:

Բ. Բանտապահ - Կարծեմ իշխանն ալ կը
հաւատայ ասոնց:

Ա. Բանտապահ - Ան ամէն փորձ կ'ընէ
իր կինն համոզելու. բայց այսքան երկա-
թէ կամք չէի տեսած:

Բ. Բանտապահ - Այս պառաւը զինքն ալ
խարած պիտի բլլայ՝ թէ գերբնական ոյժ
ունի տիկինն համոզելու:

Ա. Բանտապահ - Քչե՛ք սա յիմարը:

Բ. Բանտապահ - Վոնտե՛նք այդ ցնդա-
ծը: (Ուժով) Պառա՛ւ, կորի՛ր, հիմա նի-
զակիս ծայրը կ'անցնեմ քեզ:

Վիտիկ - (Յած) Սուսս... (մատը
շրթներուն) Իշխանին հրամանն է, ձեզ
կախել կու տամ:

Ա. Բանտապահ - Չգնեք, թող Սադա-
թէն ալ, Ագրայէն ալ կանչէ:

Բ. Բանտապահ - Եթէ յանկարծ սատա-
նան երեւնայ...:

Ա. Բանտապահ - Դուն կը հաւատա՞ս
սատանային դոյութեան:

Բ. Բանտապահ - Ի՞նչ գիտեմ, կըր-
նայ բլլալ:

Վիտիկ - Խօսքերուս թելը կտրեցիք:
Լուցէ՛ք. խորհրդաւոր վայրկեաններ են:

Շուշանիկ - Աստուած իմ, համբերու-
թիւն տուր թշուառ մօր մը:

Վիտիկ - Եկէ՛ք, Մայիսներու մանուկ
ճաճանչներ, սիրեցէք ոսկի ձեր թագու-
հին վրայ:

Ա. Բանտապահ - Կանչէ՛, պառաւ, Յու-
դայի հողին ալ կանչէ:

Վիտիկ - Այդէ՛կ ըսիր, մոռցեր էի. Յու-
դա՛, Յուդա՛, բեր երեսուն արծաթներդ
եւ տիրուհիս վզնոց շարենք:

Շուշանիկ - Ո՛վ բարի Յիսուս, ա՛ն իմ
հողիս:

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

Վազգէն եւ վերինները

Ա. Բանտապահ - (Ուժով խնդալով)
Հա՛, հա՛, հա՛, հա՛:

Բ. Բանտապահ - (Ուժով խնդալով)
Հա՛, հա՛, հա՛, հա՛, անխելք պառաւ,
դնա՛ Յուդային հետ ամուսնացիր:

Դուրսէն - (Մէկը կը կանչէ) Վազգէն
իշխանը...: (Բանտապահները դիմա՛ կը
բռնեն):

Վազգէն - (Խրոխտ եւ սպառնական քայ-
լերով) Մոգական արուեստովդ կըցա՞ր
զինքն համոզել:

Վիտիկ - (Գետնաստղ եւ ծուռ մէջքով)
Տէ՛ր իմ, այս կինն երկաթէ կամք ունի,
ոչ ոք կրնայ զինքը ծռել: Փառաւոր խօս-
քերուս կարեւորութիւն չտուաւ, մինչեւ
վերջ՝ Յիսուս կանչեց: Իր բախտը շատ
սեւ կը տեսնեմ:

Վազգէն - (Ոտքի հարուած մը տալով
վիտիկին) Գնա՛, ողորմելի պառաւ. ու-
րեմն ձեր մոգութիւններն ալ խարէու-
թիւններ են. ես գիտեմ զինքն համոզել:
Հոս, շղթաներու տակ կը մնայ, կը փոխ-
մինչեւ Հոններու դէմ պատերազմէն յաղ-
թական դառնամ: (Վիտիկը կը հեռանայ):

Շուշանիկ - Ո՛վ է այդ եկողը, կարծես
Վազգէնին ձայնը կը լսեմ:

Վազգէն - (Դեպի բանտին դուռն եր-
վազգէն - (Դեպի բանտին դուռն եր-

վազգէն) Այո՛, ես եմ, Վազգէնը. վերջին
խօսքդ կ'ուզեմ:

Շուշանիկ - Այո՛, վերջին խօսքս. չեմ
ուրանար եւ զաւակներս կ'ուզեմ:

Վազգէն - Չաւակներդ կ'ունենաս՝ երբ
կեանքդ եւ հողիդ ինձ տաս:

Շուշանիկ - Կեանքս, հողիս եւ անոր
կու տամ՝ զոր կը սիրեմ:

Վազգէն - Ուրեմն, զիս չես սիրեր, զիս
կ'ատես:

Շուշանիկ - Կը սիրեմ Վազգէնը, կ'ա-
տեմ ուրացողը:

Վազգէն - Եւ ես քեզ կ'ատեմ, մահուան
չափ կ'ատեմ, մինչեւ դժոխքին խորը կ'ա-
տեմ:

Շուշանիկ - Վազգէ՛ն, զաւակներս կ'ու-
զեմ, մինչեւ գերեզմանիս դուռը՝ զաւակ-
ներս պիտի պահանջեմ:

Վազգէն - (Դիւային քրքիջով) Հա՛,
հա՛, հա՛...: Գնա՛, իշխանիկիդ ըսէ, քե-
զի նոր զաւակներ տայ:

Շուշանիկ - Անամո՞թ, մինչեւ հո՞ս հա-
սար:

Վազգէն - Մինչեւ հոն՝ ուր դուն հա-
սար: Իմ վերջին նուէրս պիտի բլլայ իշ-
խանական կնիքով քեզ ցմահ շղթայել:

Շուշանիկ - Կրնաս այս քանի մը ոսկոր-
ները շղթայել, բայց իմ հողիս ո՛չ. ոչ ոք
կրցեր է Հայուն հաւատքն եւ ազատու-
թիւնը շղթայի վարներ. եւ դուն առաջինը
չես:

Վազգէն - (Բանտապահներուն) Պա-
հակներ, ոչ ոք համարձակի կնիքս քա-
կել, ոչ ոք այցելել, ձեզ շան պէս տիկ կը
հանեմ: (Շուշանիկին) Աւարայրի հերոսի՛
աղջիկ, (ծաղրական), Գուզարքի իշխա-
նուհի, մնաս բարով, յարգանքներս տար
տատայիդ. երբ յաղթական վերադառ-
նամ՝ ոսկորներդ դեռ շղթաներու մէջ պի-
տի գտնեմ (Կը մեկնի):

Շուշանիկ - Չաւակներս, անօրէն Վազ-
գէն, զաւակներս (Ուժեղ հեկեկաւմ):

Ա. Բանտապահ - Սիրտ կ'ուզէ որ դի-
մանայ:

Բ. Բանտապահ - Սրտիս մէջ այդ մար-
դուն դէմ ատելութեան թոյն իջաւ:

Ա. Բանտապահ - Լուչէ՛, պատերն ահանջ

տէ: (Պոռալով) Դժոխքն ոտքերուդ տակ բացուեր է:

Շուշանիկ - Օրհնէ զիս, սրբազան Հայր: Սուրբ աջդ ճակատիս դիր:

Օհան եպս. - Մանաւանդ դուն զիս օրհնէ:

Շուշանիկ - (Աւելի նուաղկոտ) Կաթիլ մը ջուր դրէ՞ք չրթներուս, սիրտս կ'այրի:

Ջոջիկ - Արցունքներս պէտք էի տալ ջուրի տեղ: (Ուժով պոռալով) Պահա՛կ, ո՛ւր ես:

Օհան եպս. - (Ջուրի քսան առնելով) Մէջն հաղիւ քանի մը կաթիլ կայ: (Շուշանիկ շրթներուն երկարելով) Քեզի վարդերու ցող պէտք էր տալ, ոչ այս նեխած ջուրը:

Շուշանիկ - (Ձովացած) Օրհնեա՛լ ըլլա՛ս, սիրտս խորոյի նման կ'այրէր:

Ա. Բանտապահ - (Սափորը ձեռքը, ներս վագելով) Ահա առի՛կ օջառակը:

Ջոջիկ - (Սափորը Շուշանիկի շրթներուն տանելով) Շուշանիկ, ահա օջառակը, քիչ մը խմէ:

Շուշանիկ - Յիսուս խաչին վրայ քացախ ու լեղի խմեց, ես ի՞նչպէս օջառակ խմեմ:

Օհան եպս. - Ի՞նչ երկնային զոհարեութիւն...

Շուշանիկ - Ջոջիկ հո՞ս ես... Ձեռք տեսներ, քիչ մ'ալ մօտեցիր:

Ջոջիկ - Հոս եմ, տիրուհիս, ոտքերուդ տակն եմ:

Շուշանիկ - Ջոջիկ, դաւակներս ի՞նչ եղան. դաւակներս կ'ուզեմ. անգամ մը գէթ համբուրեմ իմ փոքրիկ վաչէս, իմ ծաղկահասակ Մարիամս... ա՛խ, իմ արեւու պէս Համադասպս եւ իմ քաջ Մուշէղս: Զաւակներս ո՛ւր են, զոհեցի՞ն պիղծ կրակին, բռէ՛, զոհեցի՞ն:

Ջոջիկ - (Մեկնուի) Ի՞նչ սրտով լուր տամ, լեզուս կը կարկամի:

Շուշանիկ - Վաչէ՛, վաչէ՛, իմ սրտիս վերջին դարնան ծաղիկը, ո՛ւր ես:

Ջոջիկ - Իշխանուհիդ իմ, դիտեմ թէ դու երկաթէ սիրտ ունիս եւ պողպատէ հաւատք. քեզի նման զերցազն մայր դեռ չեմ տեսած. քու մէջդ մայրական սէրն

ու քաջութիւնը երկնային հրաշքով միացեր են: Մեռաւ վաչէն, վաչէն ոչ եւս է: Շուշանիկ - Մեռա՞ւ իմ փոքրիկ դառնուկս:

Ջոջիկ - (Ոտքի ելլելով) Այո՛, մեռաւ փոքրիկ վաչէն: Երբ անարժան հայրը զինքը Մծխեթի ատրուշանին վրայ զոհելու կը տանէր, կուր դետին վրայ, կառքը չըջեցաւ, ալիքներն յափշտակեցին զինքը. քչեցին կատաղի արագութեամբ. թաթիկները վեր բարձրացուց, շարժեց ծաղկած ճիւղի նման եւ ալ չերեցաւ. դետն իր դերեղմանն եղաւ:

Շուշանիկ - Ջոջիկ, օրհնեա՛լ ըլլա՛ս, կեանքիս ամենագեղեցիկ լուրը տուիր: Որդեա՛կ իմ վաչէ, մի՛ մոռնար տառապած մայրդ:

Օհան եպս. - Այս կինն իր հողեկան զօրութեամբ կը յաղթահարէ զիս. ես պէտք էի իր տեղը շղթաներու մէջ ըլլալ:

Ջոջիկ - (Ուժով հեկեկալով) Ալ չեմ զիմանար, ես կը մեկնիմ:

Շուշանիկ - Ջոջիկ, դուն կու լա՛ս. ո՛չ, ուրախ եղիր, պարէ, խնդա՛. իմ վաչէս հրեշտակներու մէջն է հիմա. տես, երկինքէն ինձ կը նայի. անիկա ժպտուն է, ինչպէս իմ զրկիս մէջ:

Ջոջիկ - (Արցունքները սրբելով) Տիրուհի՛դ իմ, քաջ եղիր. երբ մարդուս վրայ դժբախտութիւն մը դայ, ցաւերն ետեւէ ետեւ կը հասնին:

Շուշանիկ - Ուրիշ ուրախ լո՞ւր մ'ալ ունիս տալիք:

Օհան եպս. - Ի՞նչ մայր է... իր հօր առիւծի սիրտը կը կրէ:

Ջոջիկ - Մարիամը, Մարիամը...

Շուշանիկ - Ա՛խ, Մարիամս, անիկա արդէն տասներեք տարեկան է. ամէն բան կը հասկնայ: Յաւերդ առնեմ, իմ առաջին դարնան վարդս: Ո՛ւր է Մարիամս, ի՞նչ եղաւ:

Ջոջիկ - Խեղճ Մարիամը, խեղճ աղջիկ. հայրը զինքը բռնի հարս տուաւ Պերողի իշխաններէն մէկուն. հարսանիք չէր, այլ տխուր յուղարկաւորութիւն: Լացա՛ւ, ողբաց անօգուտ եղան իր արցունքները: Փողեր եւ թմրուկներ հնչե-

ցին: Ճամբայ հանեցին: Աղաչեց որ ես իր հետն երթամ: Տիպրոն կը տանէին: Երբ Գեղամայ լեռներն հասանք, ճամբան անդունդի մը եզերքէն կը գալարուէր. մէկ կողմը ահաւոր անդունդ, միւս կողմը երկինք հասնող կատարներ: Ես քովն էի... ինձ նայեցաւ, ժպտեցաւ եւ ձեռքով մնաս բարով ըսաւ. ապա խաչ հանեց երեսը եւ յանկարծ սպիտակ աղաւնիի նման բացաւ թեւերն ու թռաւ դէպի անդունդը: Դժուարութեամբ իջնաք իր քովը, վերջին շունչը կու տար եւ ես լսեցի Յի...սո՛ւս... ու մայ...րիկ չկրցաւ ըսել:

Շուշանիկ - Ի՞նչ քաղցր բերանով օրհնեմ զքեզ, ո՛վ Տէր. անձնասպան չէ՛ անձնասպան չէ՛, այլ յաւիտենական մահէն աղատելու համար է. ընդունէ՛ իր զոհը, խառնէ հրեշտակներուդ մէջ:

Ջոջիկ - Համադասպն ու Մուշէղը, վաղէքն պատերազմի դաշտ տարաւ ու տակաւին լուր չունինք:

Շուշանիկ - Թո՛ւր, Ջոջիկ, թո՛ւր, ուրախ լուր մը բեր:

Ջոջիկ - Քեզի համար հով կ'ըլլամ, հրեղէն թեւեր կ'առնեմ:

Օհան եպս. - Եւ ես ծոմով ու պահքով կեանքս պիտի անցընեմ, միայն թէ ինձ ներես:

Ջոջիկ - (Մեկնելու վրայ ու ցած) Սըրբազան հայր, որոշած եմ քանի մը անձնական պահակներով դալ եւ Շուշանիկը փախցնել այս դժոխքէն:

Օհան եպս. - Խոհեմ եղիր, դու սուրի մարդ չես, սրտի մարդ ես: Գիտես թէ եղբայրդ ի՞նչ պաղան է:

Ջոջիկ - Թող զիս հաւի պէս մօրթէ, գէթ անմեղի մը համար կը մեռնիմ:

Օհան եպս. - Երանի՛ր թէ վահան Մամիկոնեանը լուր ունենար:

Ջոջիկ - Ո՛չ, խոհեմութիւն չէ. կրաւորաւ բնաւորութիւն ունի, ամբողջ Գուգարքը հրդեհի կու տայ:

Օհան եպս. - Դուն զիտես, միայն արդ եւ խոհեմ եղիր:

Ջոջիկ - Երթանք, այսօր խոկ այս կէնը պէտք է աղատի լանտէն (կը մեկնին):

Շուշանիկ - Ջոջիկ... Ջոջիկ... ո՛ւր ես:

Ա. Բանտապահ - (Բանտին դուռը փակելով) Մեկնեցան. պարտաւ տեղ մի՛ կանչեր:

Բ. Բանտապահ - (Երկուքը միասին կոշտ կոնդերու վրայ նստելով, բեմին խորը) վաղէքն պիտի լսէ թէ թոյլ տուինք բանտարկեալը տեսնելու. վրաս դող կու դայ. մեզ ողջ ողջ տիկ պիտի հանէ, կամ Պողոտանի կացինին տակ պիտի դընէ:

Ա. Բանտապահ - Խմէ՛նք, ուրեմն, քիչ օրեր ունինք ապրելու (Փարչը բերնին կը տանի):

Բ. Բանտապահ - Եթէ վաղէքն պատերազմի մէջ մեռնի եւ Ջոջիկ յաջորդէ... վրէժ պիտի լուծէ:

Ա. Բանտապահ - Եթէ վահանը լսէ եւ հասնի, մեզ քառասուն կտոր կ'ընէ:

Բ. Բանտապահ - Եթէ ներով աշխարհ չի դառնար, մեք կեանքը փրկելու նախնիք:

Ա. Բանտապահ - Ինչ կ'ուզէ թող ըլլայ: Սիրտս չէր զիմանար այս խեղճ կընոջ ցաւերուն. քար ըլլար՝ պիտի պայթէր:

Ուրիշ կին մը կամ կը մեռնէր, կամ թէր: Ուրիշ կին մը կամ կը մեռնէր, կամ թէր: Ուրիշ կին մը կամ կը մեռնէր, կամ թէր:

Բ. Բանտապահ - Շատ անգամ կը խորհիմ. ամուսնանա՞լ թէ ոչ. դաւակ ունենա՞լ թէ ոչ: Երբ փողոցներու մէջ խնձորի զոյնով փոքրիկներ կը տեսնեմ, ինքզինքս դժբախտ կը զգամ: Մահամբժ զաւակի մը սնարին ալ՝ կարծես կեանքն աւելի միթթարկան է, քան մեր ամուլ զիճակը:

Խնձորենին աւելի երջանիկ է տակը թափած պտուղներով, քան սարի զաղաթին ամուլ հողմակոծ շոճին:

Ա. Բանտապահ - Մեր սրտերուն մէջ թագուն զղացումներ կան, որ մենք ալ չենք զիտեր. հրաբուխի պէս յանկարծ կը պայթին եւ կը մարին: Խմէ՛նք, կեանքն այսպէս եկաւ, այսպէս պիտի երթայ: (Փարչը բերնին կը տանի, ապա ընկերոջ կու տայ)

Խմենք զինի, ուրախանանք,
Երբ մեռնիլ կայ աշխարհի մէջ.
Ու չի խըմեր՝ նա չունի կեանք,
Թշուառ է միշտ աշխարհի մէջ:

ՏԵՍԻԼ ՎԵՅԵՐՈՐԴ.

Ջոջիկ, չորս զինուորներ եւ վերինները

Բ. Բանտապահ - Դուն հսկէ՛, ես քիչ
մը աչքերս գոցեմ, զինին ոսկորներս ան-
ցաւ (Նստած կը քնանայ):

Ա. Բանտապահ - Յուսանք թէ եկող
չ'ըլլար:

Ջոջիկ - (Բեմին եզերքը լայն վերաբ-
կուի մէջ պլուսած, քովն երկու զինուոր
եւ երկու հատ ալ գիմացի կողմէն բեմ
կ'ելեն) Առիթն է. (Յած սուրց մը) Կը-
նակէն յարձակէ, զէնքերն առէք (Փոքրիկ
կոխ մը, ապա Բանտապահները տեղի
կու տան): Կապեցէ՛ք չուաններով: Կո-
տրեցէ՛ք բանտին դռները (Իր պահակները
կը կատարեն) Ո՛ւր է շղթաներու բանա-
լին:

Ա. Բանտապահ - (Դողդալով) Տէր իմ,
Պողտան զահճապետին քովն է:

Ջոջիկ - Անէ՛ծք...

Բ. Բանտապահ - Թոյլ տուէ՛ք, ես եր-
թամ եւ կանչեմ:

Ջոջիկ - Ինձի՛ նայէ, այս սուրը կը տես-
նե՞ս, ոչխարի պէս ծայրը կ'անցընեմ՝ ե-
թէ խորեւ եւ չկանչես:

Բ. Բանտապահ - Կ'երգնում արեւուս
վրայ:

Ջոջիկ - (Իր պահակներուն) Քակեցէ՛ք,
թող երթայ: Նիզակը չյանձնէք:

Բ. Բանտապահ - Ա՛հ... (Բիչ մը օրգ-
տելով):

Ջոջիկ - Թո՛ւր, դեռ հո՞ս ես:

Բ. Բանտապահ - (Դուրս կը խոյանայ
եւ հեռուէն կը լսուի) Պող... տա՛ն...
դա՛հ... ճա՛... պե՛տ:

Պողտան - (Շատ հեռուէն) Ի՞նչ...

Կա...:

Բ. Բանտապահ - (Դուրսէն) Գլուխդ
պահէ եւ եկուր...

Պողտան - (Դուրսէն) Համբերէ՛, սա

դատապարտեալին զլուխն ալ կտրեմ կու
դամ:

Ջոջիկ - Անօրէն վազդէն, հայրենի
տունս սպանդանոց դարձուց...

ՏԵՍԻԼ ԵՌԹՆԵՐՈՐԴ.

Պողտան եւ վերինները

Պողտան - (Հեւ ի հեւ բեմ գալով) Ի՞նչ
պատահեցաւ...:

Ջոջիկ - Կապեցէ՛ք այդ սրիկան ալ:
Պողտան - Պողտանի ձեռքերուն զեռ ոչ

ոք չըլծայ զարկած է... (Ինքզինքը լաւ կը
պաշտպանէ՝ դանակ մը քաշելով: Ջոջիկ
սուրով ձեռքին կը գարնէ եւ դանակը գե-
տին կ'իյնայ) Ա՛հ, ձեռքս...

Ջոջիկ - Եթէ վազդէն ձեռքդ դանակ եւ
կացին տուաւ, Ջոջիկ զիտէ զանոնք խը-
լել: (Իր պահակներուն) Լաւ կապեցէ՛ք,
կրկին հանդիպով կապեցէ՛ք այդ սրիկան:

Պողտան - Վազդէն իշխանին ի՞նչ պա-
տասխան պիտի տաս, որ իր պատուաւոր
զահճապետը դաւով շղթայեցիր:

Բ. Բանտապահ - Է՛յ, Պողտան աղբեր,
կեանքն այսպէս է, մէյ մը մեղի, մէյ մը
քեզի:

Պողտան - Լռէ՛, չուն, քու զլուխդ ե՛ս
պիտի կտրեմ:

Ջոջիկ - (Պողտանին) Ո՛ւր է շղթանե-
րու բանալին:

Պողտան - Միայն իշխանաց իշխանը
կրնայ բանալին առնել:

Ջոջիկ - (Սուրը Պողտանի կուծփին դը-
րած) Պողտան զահճապետ, բանալին կ'ու-
ղեմ:

Պողտան - Եթէ մեռցնես իսկ, չեմ կըր-
նար տալ:

Ջոջիկ - (Ջոյալին, երկու ձեռքով Պող-
տանի կոկորդը սեղմելով) Պողտա՛ն, բա-
նալին...

Պողտան - (Ուժով կը խոխոյայ) Բա...
նա... լին... տունս... է...

Ջոջիկ - (Իր պահակներէն մէկուն) Թը-
ռի՛ր, անմիջապէս բեր այդ անիծեալ բա-
նալին:

Շուշանիկ - Ի՞նչ աղմուկ է. արդեօք

Համազասպա, Մուշեղս եկան... Վերջա-
պէս, ի՞նչ ուրախութիւն:

Ջոջիկ - Խեղճ իշխանուհի, եւ այս դա-
հիճը չ'ուզեր բանալին տալ:

Պահակ - (Վերադառնալով) Տէր իմ,
տան մէջ բանալին չկար, կինն ալ տեղը
չէր զիտեր:

Ջոջիկ - Ուրեմն այս սրիկան զիս խա-
բեց: (Դարձեալ կոկորդէն բռնելով) Բա-
նալին...

Ա. Բանտապահ - Խեղճ Պողտան, քու
օրդ ալ հասաւ:

Պողտան - (Ծուռ նայելով եւ դանդաղ)
Բու ալ... զլուխդ պիտի կտրեմ:

Ջոջիկ - (Կամաց կամաց կոկորդը սեղ-
մելով) Պողտան զահճապետ, բանալին
կ'ուղեմ:

Պողտան - Խըռ... խըռ...

Ջոջիկ - Խօսէ՛... եթէ չես ուզեր սատ-
կել:

Պահակ - Տէր իմ, մէջքիս վրայ բանա-
լին երու խուրձ մը կը տեսնուի:

Ջոջիկ - (Դուրս քաշելով) Ո՛րն է բա-
նալին:

Պողտան - (Մատով ցոյց կու տայ, շատ
դանդաղ եւ դողդոջուն) Սա... սա...
մեծն... է:

Ջոջիկ - (Բանտ մտնելով եւ կնիքները
քաշելով) Իր անիծեալ անունը դրուած
է...

Դուրսէն - (Փողի ձայներ. հեռաւոր
աղմուկ. ապա ուժեղ ձայն մը) Պահակ-
ներ, հսկեցէ՛ք. ձիաւոր մը կու գայ. կա-
մըրջակը վե՛ր. պատրաստ:

Պողտան - (Քրքիջով) Վազդէնն է...

Վազդէնը:

Ջոջիկ - Նայեցէ՛ք. ո՛վ է եկողը, եթէ
կղբայրս է՝ սուրով պիտի զիմաւորեմ:

Պահակ - (Երթալով եւ իսկոյն վերա-
դառնալով) Տէր իմ, պատգամաւոր մը
եկած է:

Բ. Բանտապահ - Աս ալ չեղաւ, խեղճ
Պողտան:

Ջոջիկ - (Շղթաները քաշելով) Երկաթը
մօխն մէջ մտեր է: Ծուռ, Սողոմէն կան-
չեցէ՛ք, թո՛ղ մաքուր կտաւ եւ բամպակ
բերէ, օծանելիք բերէ... չուռ: (Ինք

Շուշանիկը բանտէն դուրս կը քաշէ) Սո-
ղոմէ՛... Սողոմէ: Յիմար աղջիկ, ո՛ւր
ես:

Շուշանիկ - Անողուտ է, Ջոջիկ, այս
փայտացած ոսկորներուն օծանելիք քսել
ու պատել: Այդ վէրքերը չեն որ զիս կը
տանջեն. ուրիշ ցաւ է, ուրիշ ցաւ: Ա՛հ...
Համազասպա եւ Մուշեղս, արդեօք կը լը-
սե՞ն իրենց մօր ողբերը, կը տեսնե՞ն ա-
նոր արցունքները:

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ.

Սողոմէ եւ վերինները

Ջոջիկ - (Մինչ Սողոմէ ներս կը մտնէ)
Ո՛ւր ես, մոլորած հոգի:

Սողոմէ - (Հեւալով) Չեմ զիտեր թէ
ի՞նչպէս վազեցի: Թողուցէ՛ք զիս... ես
պիտի ըլլամ իրեն իւզարեր Մարիամը:
(Վերքերուն օծանելիք քսելով) Վա՛խ,
տիրուհիս, ե՛ս քու տեղը խաչ ելլէի: Մա-
ղբս քիչ են վէրքերդ պատելու համար:

Ջոջիկ - Գաղա՛ն Վազդէն, խշտեալ մ'ալ
չէ տուած: Ոճրադործներուն իսկ խուրձ
չէ յարդ չեն զլանար: Ի՞նչ ատելութիւն,
մը յարդ չեն զլանար: Ի՞նչ ատելութիւն,
պիտի չհասնէր: Դժո՛խք, դժո՛խք:

Շուշանիկ - Թողուցէ՛ք զիս, սիրելի
Ջոջիկ, որ չոր գետին վրայ մեռնիմ,
մեռելները հողը կը սիրեն:

Սողոմէ - (Շուշանիկին գլուխը կուրծ-
քին դնելով) Ո՛հ, իմ գերկա պիտի ըլլայ
անկողին, իմ կուրծքս՝ բարձ:

ՏԵՍԻԼ ԻՆՆԵՐՈՐԴ.

Օհան Եպիսկոպոս եւ վերինները

Օհան Եպս. - (Բեմ վազելով) Ջոջիկ,
Ջոջիկ, քեզ կը փնտռէի:

Ջոջիկ - Չէ՞ք զիտեր թէ խաչին տակն
եմ: Ի՞նչ կայ սրբազան Հայր:

Օհան Եպս. - Նամակ մը, Վազդէնէն
նամակ մը, Վազդէնէն նամակ մը:

Ջոջիկ - Պատուէ՛, նեաէ՛:

Օհան Եպս. - Օրհնած, նայինք ի՞նչ դը-
րած է:

Ջոջիկ - Դեռ չէ՞ սատկած :
 Օհան եպս. - Եթէ նամակ դրեր է, ուրեմն՝ դեռ չէ մեռած :
 Շուշանիկ - Ձառակներէս լուր մը կա՞յ :
 Օհան եպս. - Նամակը Ջոջիկին դրուած է, եթէ թոյլ տայ՝ բանամ եւ կարգամ :
 Պողոտան - (Ինքնիրեն եւ ցած) Յուսանք թէ յաղթական ետ դառնայ :
 Բ. Բանտապահ - Պողոտան դաճնապետ, հազար մեղի, մէկ քեղի :
 Պողոտան - (Մրմունով) Քու աղտոտ գլուխդ ետ պիտի կտրեմ :
 Ջոջիկ - Սրբազան Հայր, ինձ համար այդ նամակն արժէք չունի. եթէ կ'ուզես՝ բա՛ց եւ կարգա՛ :
 Օհան եպս. - (Նամակին կնիքները քակելով՝ բարձրաձայն կը կարդայ) Սիրելի եղբայր իմ Ջոջիկ :
 Ջոջիկ - Մինչեւ հիմա իր ոտքերուն փոշին էի, հիմա սիրելի եղբայր եղայ. չուն աշխարհ :
 Օհան եպս. - (Շարունակելով) Սիրելի եղբայր իմ Ջոջիկ : Դէպքերն այնպէս ցոյց կու տան թէ պատերազմը տակաւին երկար պիտի տևէ : Այժմ ձորայ կիրճերուն մէջ կը կռուինք :
 Ջոջիկ - Հոն ալ սատկէիր :
 Օհան եպս. - (Շարունակելով) Հոնքը ուժեղ յարձակումներ կը դործեն : Մենք զերմարդկային ոյժերով կը պատերազմենք : Հայերու վրէժն է որ կ'ուզեն սոսնել : Յաղթանակին վրայ վստահ ենք, սակայն դեռ շատ արին պիտի թափուի :
 Ջոջիկ - Նախ քան սեւ արիւնդ :
 Պողոտան - Բանտապահն է՛ր, գլուխնիդ պատրաստ թող ըլլայ, կացինը լաւ կը սըրեմ :
 Օհան եպս. - Լա՛ն :
 Պողոտան - (Յաճ, ինքնիրեն) Ի՜նչ հաճոյք է Սրբազանի մը գլուխը կտրել :
 Օհան եպս. - (Շարունակելով) Պատե՛րազմի դաշտին վրայ ինկան Բակուր Սիւնեաց իշխանը եւ Օրբելեան իշխանը : Ես աջ թեւէս ծանր վիրաւորուեցայ :
 Ա. Բանտապահ - Պողոտան դաճնապետ, հազար մեղմէ, մէկ քեղմէ :
 Օհան եպս. - (Շարունակելով կարդալ

նամակը) Իմ բանակս փառքեր կը վստաւելի : Վստահ ենք յաղթական վերադառնալ եւ Հայաստանի եւ Վրաստանի թագերով պսակուիլ :
 Շուշանիկ - Միշտ նոյն ցնորքները :
 Ջոջիկ - Աստուած փառասէրները նախ կը կուրցնէ եւ ապա կը կործանէ :
 Օհան եպս. - Ձայնդ երկինք հասնի :
 Շուշանիկ - (Շատ նուաղկոտ) Ուրիշ Վստակ մը, եւ այդ՝ իմ ամուսինս պիտի ըլլար : Ի՜նչ չար բախտ :
 Օհան եպս. - Դեռ քանի մը տողեր ալ կան : (Կը շարունակէ ընթերցումը) Քու եւ Մցիսեթի իշխաններուն աղերսադրին ստացայ՝ բանտարկեալ Շուշանիկի մասին : Կրնայ այցելուներ ընդունիլ, բայց կը մնայ չղթաներու մէջ՝ մինչեւ ես դամ եւ մնացած ոսկորները քաղաքէս :
 Ջոջիկ - Յուսանք Կովկասի անդրաշէջներուն կեր ըլլաս :
 Շուշանիկ - Ջոջիկ, զաւակներուն մասին լուր մը չկա՞ր նամակին մէջ :
 Օհան եպս. - (Կարդալով) Համադասապս եւ Մուշեղս հանդիստ են, սրբազան կրակին կը ծառայեն : Համբոյրներով, եղբայրդ՝ Վաղգէն :
 Շուշանիկ - (Գրեթէ մարած) Վա՛հ...
 Ջոջիկ - Յուզայի՛ր համբոյր, Սաղայէ՛լի՛ չունչ : Տո՛ւր սա նամակը (Կ'առնէ եւ պատուելով գետին կը նետէ եւ ոտքերով կը կոխկրտէ) :
 Շուշանիկ - Ուրեմն... դո՛ւ... հե... ցի՞ն պիղծ... կրակին :
 Ջոջիկ - Շուշանիկ, մի՛ յուսահատիր, անոնք քու կաթիլ թմեր են, Վարդանի աբիւնն ունին : Տղայ են, ըրածնին չեն դիտեր : Թերեւս օր մը քու վրէժդ իրենք սոսնեն :
 Շուշանիկ - Վրէժ չունիմ, սրտի ցաւունիմ : Բայց ինչո՞ւ արտուած էք. պարեցէք, խնդացէք. Վաղգէն պիտի դայ արքայական թաղով. իսկ ես պիտի մեռնիմ, կը դգամ թէ վերջին վայրկեաններս են (Շատ նուաղկոտ) :
 Պողոտան - Լսեցի՞ք, պահակներ, Վաղգէն պիտի դայ արքայական թաղով. դըրժանիդ պատրաստ ըլլայ :

Ջոջիկ - (Իր պահակներուն) Քակեցէ՛ք սա բանտապահին չուանները. իսկ այս սրիկայ դահիճը կրկին չղթաներով նոյն բանտը նետեցէք : Ո՛չ, Շուշանիկին բանտը սրբաւայր է. տարէք ներքին զնգան մը, ուր զեռուներ կան, հո՛ն նետեցէք այս սատակը :
 Բ. Բանտապահ - Պողոտան դաճնապետ, հազար գլուխ՝ մէկ հատի դէմ. մահն ամէնուն համար է : (Պահակները Պողոտանը քաշքշելով կը տանին) :
 Սողոմէ - (Շօշափելով Շուշանիկի ոտքերը) Վա՛ր, Ջոջիկ իշխան, կարծես ոտքերը կը պաղին :
 Ջոջիկ - Օծանելիքով լաւ մը չվէ որ աբիւնը չըջան ընէ :
 Շուշանիկ - Ջո՛ւ... ջիկ... սրբա... դան Հայր... մօտ եկէք... աւելի... մօտ : Ես... պի... տի... մեռ... նիմ... : Տա... րէք մար... մինս մեր... Տայ... քի կալ... ուածը. հայ... րե... նի... հո... դին... մէջ... դրէք :
 Ջոջիկ - Ո՛չ, Շուշանիկ, դուն պիտի ապրես (լալագին) :
 Սողոմէ - Ծունկերն սկսան պաղիլ. ճակատէն պաղ քրտինք կը թափի : Աստուած իմ, տիրուհիս կը մեռնի :
 Ջոջիկ - Մի՛ չաղաղրատեր, ոտքերը եւ կուրծքը չվէ :
 Շուշանիկ - Կաթիլ մը ջո՛ւր... Բայց ինչո՞ւ մօտ չէ, արդեօք զիշե՞ր եղաւ. լո՛յս... լո՛յս :
 Բ. Բանտապահ - Ջուր եւ լոյս. միշտ նոյն կանչն է :
 Շուշանիկ - Վա՛չէ՛... Վա՛չէ՛, եկո՛ւր զաւակս... Մարիամ, գիրկս եկուր... : (Ջուարք երեսով) Ձեզ կարօտցեր էի... ո՛ւր էիք :
 Օհան եպս. - Արդէն դառանցանքի մէջ է :

Ջոջիկ - Բայց, Շուշանիկ, հոս Վաչէ կամ Մարիամ չկան...
 Շուշանիկ - Ձե՞ս տեսներ, քովս են, գիրկս են : (Ձեռքերը սեղմելով կուրծքին) Աղուոր Վաչէս, սիրուն Մարիամս :
 Օհան եպս. - Տեսիլքի մէջ է :
 Շուշանիկ - (Եպիսկոպոսին) Օրհ... նէ՛րիս... Հա՛յր... :
 Օհան եպս. - (Քովը ծնրադիր) Դուն զիս օրհնէ (Ոտքերը կը համբուրէ) :
 Շուշանիկ - (Գրեթէ անկեղծ) Խաչ... մը... տուէք... :
 Օհան եպս. - (Ծոցէն խաչ մը հանելով) Համբուրէ՛, աղջիկս, դուն Խաչին շատ նմանեցար :
 Շուշանիկ - Ջո՛ւ... ջիկ... դա... աւի... ներս... քեղի... կը յանձ... նեմ : Յի... սուս... ա՛ռ իմ... հո... դիս : (Շուշանիկ գլուխը Սողոմէի կուրծքին խոնարհեցուցած, ալ չի խօսիր : Բեմին ետեւէն խումբը կ'երգէ. «Լի են երկինք եւ երկիր...») :
 Սողոմէ - (Ճշալով) Մեռա՛ւ... մեռա՛ւ տիրուհիս. ձիւնը գլխուս :
 Ջոջիկ - Մեռաւ մեր սրբուհին :
 Օհան եպս. - Ո՛չ, հրեշտակի փոխուեցաւ :
 Ջոջիկ - Յիշէ՛ քու թշուառ Ջոջիկը : (Բոլորը ծնրադիր են իր շուրջը : Խումբը դուրսէն շատ մեղմ կը շարունակէ իր երգը : Աղջնակ մը, սպիտակ հագուած, ձեռքին մէջ պսակ մը՝ կ'երեսնայ Շուշանիկի սնարին վրայ. առատ լոյս : Խմբերգը կամաց կամաց կը մեղմանայ, եւ վարագոյրը դանդաղօրէն վար կ'իջնէ :

Վ Ե Ր Ջ

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ